

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

VII Բ դասարանի նախագծային ուսուցման

Համաշխարհային պատմության և Քիմիա առարկաների

Ուսուցչուհիներ՝ Շահանե Հարությունյան

Լուիզա Աղաքարյան

Կոտայքի մարզի Գեղաշենի Ռազմիկ Ստեփանյանի անվան միջնակարգ դպրոցի VII Բ դասարանի աշակերտների հետ՝

1. Սարգսյան Գոհար
2. Մխիթարյան Մարիամ
3. Վարդանյան Գոռ
4. Գեղամյան Վահե
5. Համբարձումյան Արգիշտի
6. Մարգարյան Ալեքս
7. Հակոբյան Անգելինա
8. Հակոբյան Գոռ
9. Հայրապետյան Մարի
10. Վարդանյան Տիգրան
11. Ավետիսյան Թինա
12. Բաբայան Ալեքս

2024 թվականի նոյեմբերի 13-ից մինչև դեկտեմբերի 18-ը ընկած ժամանակահատվածում իրականացրել ենք նախագծային ուսուցում «Նյութերը պատմության հոլովություն» թեմայով: Մեր նպատակն էր ուսումնասիրել նյութերի (քար, մետաղներ և այլն) կիրառման պատմությունը տարբեր ժամանակաշրջաններում: Բացահայտել նյութերի ազդեցությունը հասարակության, գիտության և մշակույթի զարգացման վրա: Ջարգացնել հետազոտական, ստեղծագործական և թիմային աշխատանքի հմտություններ: Ջարգացնել մեղիագործիքների տեսակների հմտություններ՝ բարձրացնելով մեղիագրագիտության մակարդակը:

Նախագիծն իրականացնելու համար նախատեսված էր 6 շաբաթ: Աշխատանքը սկսելու համար նախ անհրաժեշտ էր ծանոթանալ նյութերի ստեղծման պատմությանը: Սովորողները տեղեկություններ հավաքեցին առաջին աշխատանքային գործիքների, մետաղների հայտնագործման, արքիմիկոսների բացահայտումների, ինչպես նաև նյութերի կառուցվածքի, քիմիական տարրերի դասակարգման և Մենդելեևի աղյուսակի մասին: Դիտեցին կարճ տեսանյութեր թեմայի վերաբերյալ: Այնուհետև բաժանվեցին 3 խմբի, յուրաքանչյուր խմբում 4 հոգի և ստացան հստակ հրահանգ՝ քիմիական և պատմական աղբյուրներից օգտվելով տեղեկություններ հավաքել նյութերի վերաբերյալ: Ուսումնասիրել և վերլուծել նյութերի դերը մարդկության պատմության հնագույն ժամանակաշրջանում և ազդեցությունը հասարակության զարգացման վրա, քիմիական նյութերի մասին առաջին հիշատակումները պատմական

աղբյուրներում: Ակտիվ հետազոտական և պրպտողական գործունեության ընթացքում սովորողները հավաքեցին մեծ քանակությամբ տեսական տեղեկություններ նյութերի վերաբերյալ՝ ընդգծելով նյութերի պարզ կիրառման ազդեցությունը տեխնոլոգիական առաջընթացի վրա:

Անհրաժեշտություն առաջացավ այցելելու Հայաստանի պատմության թանգարան և Երևանի պետական համալսարանի քիմիայի ամբիոն : Սովորողները տեսան հնագույն ժամանակաշրջանի գտածոներ, տարբեր նյութերից պատրաստված առաջին աշխատանքային գործիքները, արծաթե ապարանջաններ, սափորներ, կարասներ, կենցաղային իրեր: Մեծ էր ոգևորությունը, երբ հնարավորություն ընձեռվեց ներկա գտնվելու «Մայր աստվածություն. Անահիտից Մարիամ» ցուցադրությանը: Հանդիպումը բանախոս Արմեն Գալստյանի հետ մեծ հետաքրքրություն առաջացրեց սովորողների մոտ քիմիա առարկայի նկատմամբ:

Օրը հազեցած էր և տպավորություններով լի:

Սովորողները իրենց ստեղծագործ մտքի շնորհիվ ստացան քիմիական նյութերի խորհրդանիշ-պատկերներ՝ մեկնաբանելով դրանք: Պատրաստեցին սահիկաշար և տեսանյութ, որտեղ ներկայացված էին իրենց կատարած աշխատանքները: Որպես վերջնարդյունք ստեղծեցին Մենդելևևի քիմիական տարրերի աղյուսակի հայերեն տարբերակը: Նախագծային աշխատանքը ներկայացնելուց հետո ծավալվեց քննարկում, որի ընթացքում ուսուցիչների և աշակերտների կողմից հնչեցին հետաքրքիր առաջարկներ և գնահատականներ կատարված աշխատանքի վերաբերյալ: Յուրաքանչյուր աշակերտ գնահատվեց իր կատարած աշխատանքի, ներկայացման և ձեռքբերած գիտելիքի հիման վրա: Շնորհակալություն